

տուել մի 1200 բուրգու ալիւր, մնացած գումարը պահել է իր մօտ անգործագրելի, կամ ինչպէս ասում էին՝ իր համար պոլիմպրեպալ է բերել տուել՝ օգուտ քաղելու թէ՛ այդ բերել տուած 90 մեշու ալիւրը և թէ՛ արքունի ամբարից տրուած (կարծեմ) 400 մեշու ալիւրը՝ նոյն յանձնաժողովի հակողութեան տակ բաժանվել է հացթուխներին էման գնով, որ քաղաքի բնակիչների համար հաց թխել և լիտ 60 կոպէկով վաճառել, բայց շահախնդիր հացթուխները ծախել են բարձր գներով գիւղացու վրա թէ թխած հացը և թէ ալիւրը և քաղաքացիի ասածից երեքեք անգամ ար արդ պայտան հազանցութեան համար ինքը ղրկել է նախնազա-կան վարչութեան և ոստիկանութեան ու խնդրե-որ դրանց կողմից զօրաւոր հակողութիւն գործա-դրվի, որպէս զի գիւղացուց հաց չը տան հացթուխ-ները, բայց պատշաճաւոր օգուտիւն չէ ստացել նրանց կողմից։—Իրաւաստեանից արդարապէս մե-ղադրված յանձնաժողովի անդամ Հալիւ-Միլիզայ-Հիւսէինը, ըստ առաջարկութեան իրաւաստե վա-սիկ Նիկողարեանցի՝ յանձնառու եղաւ իր մօտ մը-նացած փողով բերել տալ ալիւր այն գնով, ինչ գնով որ 90 մեշուը գնել է սորանից երկու ամիս առաջ և սորանով արդարացաւ...

Գալով երկրորդ խնդրին՝ երեք զլիւսաւոր առա-ջարկութիւն եղաւ. 1) իր աւաստե վաճառել Նիկողար-եանցը առաջարկեց, որ ստորագրութեամբ ժողո-ված փողով գնված ալիւրը գործադրվի միմայն քաղաքի աղքատների համար. ասաց՝ ցուցակա-գրել իր օք աղքատներին անունը, տալ իւրաքան-չիւր ընտանիքին հարկաւոր եղած հացի համար ամսական տ 0 մ 5 կ, որով իրաւունք ունենայ ստանալ իր համար որոշված քանակութեամբ թխած հաց՝ այն հացթուխներից՝ որոնց կը տրուի վարչութեանց ալիւր այդ նպատակի համար, իսկ նոքա (հարուստները) որոնց չի տրուի տոմսակ, գնեն իրանց համար հաց փոքր ինչ աւելի գնով այն հացթուխներից, որը չեն ստանում ալիւր քա-ղաքից։ Այս տոմսակների միջոցով կարելի էր ի-մանալ նախ թէ օրական ինչքան ալիւր պէտք է տրուի քաղաքային վարչութեանց, երկրորդ՝ տոմ-սակ ունեցողը կարող էր ապահով ստանալ իր բաժինը միայն. երրորդ՝ քաղաքի պարտքը կիսով չափ կը լինէր. չորրորդ՝ հարուստներն էլ աղքատի բաժին մասնակից չէին լինի և ինչպէս որդ՝ որ և է հակողութեան հարկաւորութիւն չէր լինի. Բայց այս առաջարկութիւնը չընդունվեց, որովհետև 1) վարչութեան անդամ պ. Բարաջանեանցն ան-նախնի համարեց կարճ միջոցում աղքատների ա-նունան ցուցակագրելը, ասելով որ՝ դորա համար հարկաւոր է առնուազն ամիս ու կէս ժամանակ՝ մոռանալով որ ամենամեծ քաղաքներն անգամ մի օրվայ մէջ կարողանում են ցուցակագրել. 2) այդ առաջարկութիւնը չը հասկացան իրաւաստեանից խիստ շատերը, որովհետև սովոր չեն պատշաճա-ւոր ունկնդրութեան. 3) Առաջարկութիւնն արաւ պ. քաղաքագլուխը՝ հիմնվելով ձայնաւորներից ո-մանց առաջարկութիւնների վրա և այսպէս ձեա-կերպեց. տասը հացթուխի տալ օրական 60 լիտր ալիւր, որից կը զոյաւայ 90 լիտր թխած հաց. դորա կէսը պարտաւոր են հացթուխները պատ-րաստելու մինչև առաւօտեան ժամը 7-ը, միւս կէսն էլ՝ մինչև ժամը 2-ը, զկի ճաշուռ. նշանակել իրաւաստեանից օրական հերթապահներ, որոց պարտաւորութիւնը լինի գնալ նշանակած ժամերին հացթուխներին խանութը, ստանալ թխած հացը կէսով և գնել դուրսը ծախելու համար. Առաջար-կութիւնն ընդունվեց, իբր չէտ իրագործելի, որի հետեւեան և ճիշդ կատարվելու մասին, առ-նուազն, տարակուսելի է.

4) Պէտք է ասել որ այդ երկրորդ առաջարկու-թիւնն ընդունվելուց յետոյ՝ իրաւաստեանից մէկը, այն է վարդան Նիկողարեանցը, առաջարկեց խորհրդին, այսպէս. որովհետև անկարելի է ճիշդ հակողութեան անել հացթուխների վրա, որ քաղաքի բնակիչների համար պատուիրած հացից չը գողանան և թանկ գնով չը ծախեն կողմնակի մարդկանց վրա և որովհետև անկարելի է արգելել, որ գիւղացից հաց չը գնեն քաղաքից՝ ուստի հարկա-ւոր է քաղաքային վարչութեանն ունենալ իր սե-փեւ կ'ան հ ա գ ա Ր ա ն ը. 5—6 հատ, սորանով մը-ցել միւս հացթուխների դէմ, վասն զի միակ մըցու-թիւնն է, որ կարող է նոցա սանձահարել. խոր-հուրդը չընդունեց առաջ այս առաջարկութիւնը, բայց երբ պ. վ. Նիկողարեանցը հարցուց թէ արդեօք, եթէ հացթուխները չընդունեն քաղաքա-յին խորհրդի վճիռը և վարը կամ միւս օրը փա-կեն իրանց հացարանները, այն ժամանակ ինչ պէտք է անել. խորհուրդն ինկատի առնելով այս հարցը՝ վճեց. այդ ղէպով բանալ 5—6 հացա-գործութեան խանութ քաղաքի հաշուով և սորա իրագործելու համար ընտրեց 5 անդամից բաղկա-ցած մի յանձնաժողով, որը (չը գիտեմ ինչ մտքով)

առաջին յանձնաժողովի հակողութեան ներքոյ պէտք է գործէ։—Թէ ինչ հետեանք պիտի ունենան այս վճիռները, ոչինչ չեմ կարող ասել առ այժմ. բայց կը ցանկայի որ այսպիսի ստիպողական հանգա-մանքներում ք. վարչութիւնը կրկնապատկէր իր գործունէութեան եռանդը և աղքատ դասակարգի աննախնաձեղի վիճակին մարդասիրաբար կարեկցէր։—Մի երկու խօսք ևս էլ միմայն վարչութեան դէմ խօսողներին. Բաղաքիս պողաւմաւորութեան յաջողեցաւ 100 խալվար ցորեն գնել էլ միմայնից, խալվարը 80 բուրգով. 2ը գիտեմ ուրիշների կար-ծիքը այդ վաճառքի մասին ինչ կը լինի, բայց ես կ'ասեմ որ ինչ որ ընծայ կամ ողորմութիւնն է, պէտք է իր ընթացիկ գնովը վաճառվի. այդ կէ-տից նայած, պէտք է շատ շնորհակալ լինել Նորին Օծութիւնից, որ բարեհաճեց այդքանը գոնէ վա-ճառելու այդ գնով. Հաստատ աղբիւրից գիտեմ որ էլ միմայնը կերակրում է, բացի իր միաբաննե-րից՝ օրական 200 հոգի ևս, որոց մեծ մասը թիւր-քիայից զաղթածներն են կազմում. Այս 200 հո-գին, վանքի միաբանների հետ՝ կազմում են մօտ 300 հոգիք, որոց հազիւ բաւ լինի օրական մօտ մի խալվար ցորեն, այն ինչ վանքի ամբարում 600 —650 խալվար է մնում միայն, որից էլ միմայնի պէս վանքը պէտք է գոնէ մի տարվայ պաշար պահէ և մնացածովն էլ իր չրջակայ և սեպական գիւղերին օգնէ.

Ալիւնի

ՆԱՄԱԿ ԴԵՐԵՆԵՒԻՑ

18 յունվարի

Այս տարի կովկասի ամեն կողմերից հազար ու մի տխուր լուրեր են հասնում հացի թանգու-թեան պատճառաւ, ամեն տեղ ժողովուրդը վեր-դրված լարված վիճակի մէջ է, ամենքի խօսակ-ցութեան առարկան հացի թանգութիւնն է. հա-զարաւոր ըուրիւններ միտնում են սովի առաջն առնելու, բայց դարձեալ բաւական չէ՝ դեռ ձմե-ռը և գարունը շատ փողեր պիտի կուլ տան և ո՞վ գիտէ ինչպէս կ'անցնի ամառը։

Մենք հայերս միշտ զարթնում ենք այն ժամա-նակ, երբ վտանգը արդէն հասնում է և դանակը ուկրիւն դէմ ընկնում, իսկ նրանից առաջ մեզ համար ամեն մի գործութիւնը ջլատող երեւոյթ, ա-մեն մի սպառնացող վտանգ նշանակութիւն չունի. մենք չենք հեռաւտեանութիւն ինչ կը լինի այս կամ այն վտանգի հետեանքը և ամենին չենք աշխա-տում իր ժամանակին նրա առաջն առնել, այլ ըս-պատում ենք մինչև որ վտանգը գալիս է և սկսում է իր աղղեցութիւնը բանեցնել, ահա այն ժամա-նակ միայն դարթնում ենք և հանդէս դուրս գա-լով՝ ձայն տալիս, թէ ժողովրդի այս ինչ պէտքը պիտի հոգացվի, դարման տանիլ. Մինչև մեր ժողովրդի կազմելը, փող հաւաքելը, պաշար բերել տալը ունեւորը մանկեանում է, մանկը աղքա-տանում, իսկ աղքատի օրը աւելի սեւեռում և դառ-նանում. Բաղաքացին գոնէ կարող է մի կերպով իր գլուխը պահել, բայց գիւղացին ինչ պէտք է անէ իր աննախնաձեղի դրութեան մէջ, չէ որ նա ակամայ իր ունեցած չունեցածը հացի պիտի տալ սովից չը մեռնելու, միանգամայն յոյսը Աստուծու վրա դնելով, բայց թէ ինչ խեղճութիւններ են պա-տահում, այդ ինքն ըստ ինքեան յայտնի է.

Ո՞վ պէտք է հոգալ գիւղացու վիճակի բարւո-րմանը, գիւղացին. նա տղէտ է, նա անկարող է դեռնալ. Բաղաքացին որ այնչափ շահում է նրա-նից, որ այնքան սերտ կապ ունի նրա հետ, չը պէտք էր սառն ու անտարբեր մնար դէպի նրա թշուառ վիճակը, նրա կեցութիւնը. չէ որ նրա շահերը իր իսկական շահերն են. եթէ քաղաքացին ուզում է իր անձի շահը, անպատճառ պիտի բար-ւառէ գիւղացու դրութիւնը. Գժադաբար մինչև այսօր հայ գիւղացու և հայ քաղաքացու մէջ մի անանցանիկ անգունդ կայ. Բաղաքացին չը նա-յելով որ ամեն օր գիւղացու տոմանակը աշխա-տութեան արդիւնքն է վայելում, դարձեալ հեռու է պահում իրեն և մի տեսակ արհամարհանքով նրա վրա նայում. նա կարծում է թէ գիւղացին մի տեսակ արարած է, որ բնութիւնից սահ-մանվել է միայն իրեն ստրկաբար ծառայելու, իր պէտքերը լցնելու, այդ իսկ պատճառաւ էլ չէ թափանցում նրա ներքին վիճակին, չէ աշխա-տում նրա նիւթական ապահովութեան և բարո-յական զարգացման համար. քաղաքացին բոլոր-վին հեռու է այդպիսի զաղափարներից.

«Մշակը» իր համարներում անդադար կրկնում է գիւղացու ապահովութեան համար, քանի քանի միջոցներ է առաջարկում, բայց ո՞ր, մեր հայերը այնքան փափուկ սիրտ չունեն ճշմարտութիւնը ընդունելու, նրանք մի քանի տարի շարունակ

փորձութեան պիտի մատնվին, որ ապա թէ ըս-կան մի բան անել. Գառը Աստուծու, մի երկու տարի է որ փորձութեան համը առնում ենք, այ-սուհետեւ գոնէ աշխատենք ապագայի փորձանք-ներից ազատվելու, այսուհետեւ գոնէ խելամոռնք, որ մինչև մեր մէջ ընկերութիւններ չը կազմվեն՝ գիւղացու կենսքը ապահովացնելու, գիւղատնտե-սութիւնը ծաղկեցնելու, նրան նահապետական դրութիւնից հանելու, մենք միշտ պիտի վնաս-վենք և տաճառապատիկ տուենք։

Դէրեքնդը, ինչպէս երեւում է, ամբողջ կովկա-սում ամենաբարձրիկ դրութեան մէջ է գտնվում հացի կողմանէ. Ալիւրի պուրը չըջակայ քաղաք-ներում հասել է մինչև 2 բուրգի 50 կոպ. մինչ-դեռ այստեղ 1 բուրգի 50 կոպէկով կարելի է լաւ ալիւր գնել. թէ քաղաքը և թէ մասնաւոր անձինք ժամանակին եթէ ոչ առաւ, գոնէ մինչև ամառ-նամուտը բաւականացնող ցորեն են գնել և այժմ ալիւր չիսելով վերոյիշեալ գնով ծախում. Միւր թանգ է, ֆունար 10—12 կոպ. ոչխարին, իսկ տաւարինը 8 կոպէկ. բայց բնութիւնը այդ կող-մից էլ օգնել է մեզ, վայրենի բաղերը խմբերով լին են թէ ծովը և թէ դաշտերը, այնպէս որ հատը 10—12 կոպէկով ամեն օր մահ են ածում. Ամիս 15-ին ռուսները մի ներկայացուած տուին յօգուտ տեղական քաղաքած մուսուլմանների հա-մար. բարձրաստիճան մարդկանց կանայք թէ հայերից և թէ ռուսներից կառավարչի պաշտոն էին կատարում բուժէտուած, որի եկամուտը յառ-կացած էր նոյնպէս մուսուլմաններին. ներկայա-ցումը բաւականին յաջող անցաւ և մեծ տպաւո-րութիւն գործեց. թող օրինակ առնեն մեր հա-յերը ռուսաց այս մարդասէր վարմունքից.

Դէրեքնդի

ՆԱՄԱԿ ՍԱՐԻՂԱՄԻՇԻՑ

22 յունվարի

Սարիղամիշ գիւղը գտնվում է Վարսի նահան-գում. Ռուս-թիւրքական պատերազմից առաջ այս հայաբնակ գիւղը բաւական բազմամարդ էր. ինչպիսիքները պարապում էին երկրագործութեամբ, զլիւսաւորապէս և վաճառականութեամբ մասնա-ւորապէս. Բայց խեղճ և անգործ, առանց ուրիշնե-րին մագաչալի վնաս հասցնելու, ընթանում էին իրանց ընտրած խաղաղ և բնական շաւղով.

Այն ինչ, երբ պատերազմն սկսվեցաւ՝ կորաւ, բռնաբարվեցաւ նոցա խաղաղ կենսքը, նոցա կենսքին սպառնացաւ անապահովութիւն, մահ, նեղութիւն, տանջանք... և շատերը տալով իրանց բոլոր ունեցած կարողութիւնը—ունեցած չունե-ցած հարստութիւնը, իրանց կենսական անհրա-ժեշտ միջոցները զարկերին, որոնք մարդկային պատկերով ու հանդերձով յայտնվել էին և այս կողմերից մեծ քանակութեամբ գոհեր էին տա-նում, այլ և ետ ուռնեցան իրանց կենսքից.

Պատերազմի վերջնաւուրց փորը ինչ առաջ, այս խեղճ արարածները, չը կարողանալով տա-նել ամենայն տեսակ տմարդի կամայականութեան, ցրվեցան ալ և ալ տեղեր, որոնց մնացորդները այժմ այստեղ կազմում են մի քանի հայ ընտա-նիք, որոնք պարապում են երկրագործութեամբ և մանրավաճառութեամբ (զօրքի վրա).

Պատերազմը վերջնաւուրց յետոյ այստեղ մտա-կան զօրք ուղարկվեցաւ.

Այս ծննդան տօնին ռուսները մեծ պատրաս-տութիւն էին տեսնում այդ մեծ տօնը կատարե-լու. Այն ինչ մենք, հայերս, ոչ եկեղեցի ունէինք և ոչ էլ քահանայ, ուստի մենք պէտք է զօրքի մնայնք դորանից, եթէ մայր Ղորխմազ Յով-հաննիսեանը չը հրաւիրէր մերձակայ հայաբնակ Բնաբաջին գիւղի Մեսրոպ քահանայ Տէր-Յով-հաննիսեանցին և տօնակատարութեան համար իր տանը տեղ չը տար.

Այս առաջին աղապարական գործը չէ, որ մ. Ղ. Յովհաննիսեանը կատարում է, նա շատ ան-գամ է օգնել խեղճ և անճար հայերին.

ՄԿրտիչ Տէր-Սիմեոնեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Տանձուտ, 17 դեկտեմբերի

Ձեր լրագրի 1879 թւականի 200 համարում յայտնած էր մի քանի շուշեցիների զանգատը, որոնց օգնութեան ես ղրկել էի Եկեղեցիապետի վէպը տարածելու համար.

Իմ պարտքն էր պ. պ. ստորագրողներին բա-ւականացնել, բայց ես ստորագրութեան թերթը և գումարը հեղինակին ուղարկելիս, յայտնել էի նո-

րան իմ հեռանալը Շուշուց, և խնդրել ուրիշն

յանձնելու գրքերը բաժանելու գործը. Յոյս ունեմ որ շուշեցի պ. պ. ստորագրողները կը ղրկեն հեղինակին, նրան ուղղելով իրանց պա-հանքը.

Ա. Թոխմախեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 28 յունվարի

Հաստատ աղբիւրներից տեղեկանալով վանի անտանելի սովի մասին, իսկոյն սկսեցինք նուիրա-տութիւններ ժողովել զանազան դասակարգի մարդ-կանցից, որի գումարն եղաւ հարիւր քսան և երկու բուրգի ութսուն և մէկ կոպէկ. ի միաժողովին նուիրատուներին. խնդրում ենք ձեռնարկ, պ. խրմ-րաղիր, տեղի տալ տպելու նոցա անունները ձեր պատուական լրագրում և ուր հարկն է չուտով տեղ հասցնել.

Յարութիւն Շահաղիգեանց 5 բուրգ, Մ. Ռոստո-մանց 5 բ., Յ. Աղամիրեանց 5 բ., եղբարք Մնա-ցականեանց 5 բ., Ի. Մովսէսեանց 5 բ., Յ. Մո-վսէսեանց 5 բ., Ալէքսան Ն. Միլիկեանց հարուստ վաճառական 6 կոպ., Ա. Խոջամիրեանց 3 բ., Դրամեանց 3 բ., Յարութիւն Գէորգեանց 3 բ., Ալէքսանդր Ալմեանց 3 բ., Տիգրան Մովսէսեանց 3 բ., տիկին Սյայմէ Զաղաթեանց 2 բ., Արշակ Ղրիմեանց 2 բ., Նիկողոս Նիկողոսեանց 2 բ., Մ. Դանդուրեանց 2 բ., Բ. Մովսէսեանց 2 բ., Կարապետ Ապանեանց 2 բ., Սարգիս Գապա-րեանց 2 բ., Գապար Տէր-Օհաննիսեանց 2 բ., Հայրապետ Սուլիսեանց 2 բ., Այսպառ օմն 2 բ., Զ. Գրիգորեանց 1 բ., Ս. Գուլամիրեանց 1 բ., Յովհաննէս Չամչեանց (աւանդ) 1 բ., Ալմէն Պետրոսեանց 1 բ., Ալէքսանդր Սուլիսեանց 1 բ., Եագօր Մովսէսեանց 1 բ., օմն 1 բ., Սերի-րեակով (ուսանող) 1 բ., Միլիզայ Ս. Տէր Յովհան-նէսեանց 1 բ., Բարսեղ ա. Նիկողոսեանց 1 բ., Ժամադոր Նոյ 1 բ., Ժամադոր Նոյ 1 բ., Սարգիս Նոյ 1 բ., Համադաս Սարգսեանց 1 բ., Սար-գիս Մակարեանց 1 բ., Ստեփան Սուլիսեանց 1 բ., Յովհաննէս Բարսեղեանց 1 բ., Միսա Պատրեանց 1 բ., Մարգար Տ. Օհաննիսեանց 1 բ., Առաքել Խաչումեանց 1 բ., Գէորգ Տապատապեանց 1 բ., Մարտիրոս Շիգանեանց 1 բ., Սէրգէ Բա-զադեանց 1 բ., Սմբատ Բարսամեանց 1 բ., Եագօր Կուրանեանց 1 բ., Ս. Գարաշով 1 բ., Ս. Յարութիւնեանց 1 բ., Յ. Միլիկեանց 1 բ., Ալեքս-սեանց 1 բ., Արտէմ Սարգիսեանց 1 բ., Ս. Մամիկոնեանց 1 բ., Եագօր տէր Ստեփանով 1 բ., Ն. Կովսեանց 1 բ., Ջիւլէր Սուրբուկով 1 բ., Պ. Սարգիսեանց 1 բ., Ս. Գափեանց 1 բ., Յ. Բոնապեանց 1 բ., Յ. Սարգսեանց 1 բ., Ա. Վարդանեանց 1 բ., Ս. Վարդանեանց 1 բ., Ա. Շաքարով 1 բ., ախալցխայի 1 բ., հայ օմն 1 բ., հայ օմն 1 բ., Մելիք-Մհարեանց 1 բ., Մելիք Մուրադեանց 1 բ., Արտէմ Տէր-Յովհաննէսեանց 1 բ., Կ. Վարդանեանց 1 բ., Շուշանիկ Խոջա-միրեանց 1 բ., Պիտիկեանց ուսանող 50 կ., Չի-լիկեանց ուսանող 50 կ., վասիլ Մամիկոնով 50 կ., Հովսէփէր Զախվէրդեանց 50 կ., Սարգիս Մնացականեանց 50 կ., Կարապետ Սիմեոնեանց 50 կ., Գրիգոր Շահաբաթեանց 50 կ., Ա. Խա-չատուրեանց 50 կ., Եագօր Մելիքեանց 50 կ., Յ. Միլիկեանց 50 կ., Գրիգոր Լիմոնով 50 կ., Ն. Գարսոն 50 կ., Մկրտիչ Խաղաղարկեանց 50 կ., Ա. Վարդանով սափրիչ 30 կ., Ն. Մատնով (երկապ) 25 կ., Կատուով ուսանող 20 կ., Գոն-դուրեանց 20 կ., Լուսին Թուրեանց 20 կ., Ալեքսանդր պարսիկ 10 կ., Դումարն է 122 բ. 81 կ.

Ս. Գուլամիրեանց և Ա. Խոջամիրեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են ԱԽԱԳԱՒԱԲԻՑ, որ օրի-րում պ. Մ.-ի տան մէջ եղած հացկերպովի ծա-մանակ մի քանի պարոններ յօգուտ քաղաքի չը-բաւարարելու նուիրել են 54 բուրգ.

Վերջին օրերի ընթացքում ԹԻՖԼԻՍԻՍԻՍԻՍ եղա-նակը փոխվեց. Օրերը տաք և զարնանային են. «Тифл. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ իր խմբագրութեան խմբագրութեան յօգուտ սովորակ-ների տուած ներկայացումը ընդհանուր եկամուտ եղել է 1075 բ. 40 կ., թատրոնի վարձ տուած է պ. Պապիս 300 բ., ուրեմն մնացել է 775 բ. 40

Կ. Նորիստուութիւններէ կայացել է 397 ր. 50 Կ. ուրիշն բոլոր ստացված գուտ գումարը 1152 ր. 90 Կ. Պէտք է ասել, որ պարոն Պալմ 300 րուր թատրոնի վարձ վերցնելով, բաւական թանգ է վերցրել, բայց այդ բանը նրան ներքի է, որովհետեւ պ. Պալմը թատրոնը տաքացրել է, լուսաւորել է, երկրորդան ծախսեր է արել և բացել այդ խնդր էլ իր գրպանից, (կամ նոյն 300 ր. թատրոնի վարձից) 50 րուր նուրբել է սովալուրներին:

Մեզ հաղորդում են ԱՅԱԼՖԱԼԱՔԻՑ, որ քաղաքացիք զմեզ են սրբազան Սաղիսեանին և խնդրել են պարտիւն անուանված հոգևոր տուրքի հացերը մի տարի ժամանակով իրանց փոխ տալ: Ասում են, որ հացերը արդէն ծախված են եղել:

Յունվարի 31-ին պ. Սլավիանսկի մի կոնցերտ տուց Սրբոնու թատրոնում: Կոնցերտը կրկին շատ լաւ անցավ: Բացի մի քանի բազմաթիւներէ բոլոր տեղերը թատրոնում բռնված էին, թատրոնը լի էր զխաւորապէս զինուորներով, Սլավիանսկի ստացաւ մի գեղեցիկ բնծայ քաղաքիս իւնկէ բնիկի զպրոցի երիտասարդ զինուորներից: Ընծան մի արծաթեայ ոսկեղոծ թաս էր և մի պսակ:

Մեզ հաղորդում են ԵՐԵՒԱՆԻՑ որ այդ քաղաքից զէպի Ագուլիս Սաքառազի գեղի զպատմ անցնող ճանապարհի վրա ներքին-ազգայնի մի երիտասարդ և Դեազ գիւղի երկու երիտասարդներ ցրտից սառել են:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅԻՄԱՆՍԻԱ

Պատգամաւորների ժողովն ընդունեց օրէնքի այն ծրագիրը, որով ներքին նաւագնացութեան հարկերը փոփոխութեան են ենթարկուի:

Պատգամաւորների ժողովի նախագահը յայտնեց, որ մարտային ցուցակի մասին վիճարանութիւններ են սկսվելու, և խնդրեց ժողովին անվամբերից, որ մի այսպիսի նշանաւոր հարցի ըննութեան ժամանակ, քաղաքական հարցեր չը խառնեն:

Մարտային և այլ և այլ հարկերի ցուցակի վերաբերութեամբ, երկրագործութեան և առեւտրական միջոցարար պ. Տիրար յայտնեց կառավարութեան կարծիքը:

Սենատն ընդունեց միջոցարարութեան առաջին յօդուածը, որը ձգտում է բարձրագոյն ուսումնական խորհրդարան կազմել:

Յունվարի 29-ին կայացած պատգամաւորների ժողովն մէջ, պ. Տիրար ապացուցեց, որ 1876-ից սկսած գաղթականութեան վաճառաշահութիւնը լաւացել է, այս պատճառով էլ պ. Տիրար կարծում է, որ բամբակի հարկի վրա 24% աւելացնելը բաւական է: Իսկ ինչ կը վերաբերի մշտական առարկաներին, միջոցարար խօսքերով, կառավարութիւնը համաձայն չէ դրա հարկը 40%-ից աւել բարձրացնել, չը նայելով, որ այդ մասին կազմված մասնաժողովը աւելի էր առաջարկում: Սրանից յետոյ պ. Տիրար ապացուցեց, որ երկրագործութիւնը 1860-ի վերանորոգութենից մեծ օգուտներ քաղեց: Միջոցարարը կարծում է, որ հարկերի թիւթեացները ոչ թէ երկրագործութեանն օգուտ կը բերել, այլ նա շահաւէտ կը լինի միայն միջնորդներին, որոնք երկրորդ ձեռքից ծախելով, աւելի օգուտ կը ստանային. երկրագործութեանն օգնելու տմենագումը միջոցն այն է, որ հեշտացվի դաշտերի ջրերը, տարածվի երկրագործական գիտութիւնը, և միջոց արգելի գիւղատնտեսական ժողովներ անելու, որով այդ գործին վերաբերող զանազան մասնագէտներ միջոց կունենան միմեանցից օգուտ քաղելու, և միասին մի ընդհանուր գործ առաջ մղելու: Մենք մեր ստացածից երկու

անգամ աւելի մթերք ենք ուղարկում Անգլիա աւելացրեց միջոցարար և պահանջեց, որ մարտային ներկայ հարկերը ինչն փոփոխութեան չենթարկեն, որովհետեւ պ. միջոցարար կարծիքով, Ֆրանսիան ոյժ ունի մրցել օտար պետութիւնների արդիւնադործութեան հետ, և մարտային հարցը, որ ամեն երկրում ամենակենսական հարց է, կարող է ապագայ վերանորոգութիւնների և օտար երկրների հետ անելու բանագնացութիւնների ժամանակ, հիմնվել մարտային ներկայ սխտէմայի վրա:

ԱՆԳԼԻԱ

Արդէն մօտենում է պարլամենտի բացվելու ժամանակը. շուտով զանազան հարցեր ու վիճարանութիւններ կհանդիպեն. մի քանի հարցեր կը վճռեն, շատերն էլ նորից ծնունդ կառնեն. ժողովրդի ու լրագրութեան մէջ հազարաւոր բաներ են խօսում, մասնաւոր միջոցարարութիւնը զբաղված է զանազան երազական երևակայութիւններով: Ի հարկէ բաղմնութիւն են հարցերը, և պարլամենտը ահագին գործեր ու ահագին պատասխանատուութիւն ունի ժողովրդի առաջ: Այդ բաղմնութիւն հարցերից, որը ամենաշատ է ըզբաղեցնում հասարակական կարծիքը, դա հողային օրէնքի ծրագիրն է: Մեր ընթերցողներին պէտք է արդէն յայտնի լինի, թէ իրլանդական շարժումներն ինչ մեծ ազմուկ զբոսացին բոլոր Իրլանդիայում: մի կողմից այդ շարժումները, միւս կողմից անգլիական երկրագործ դասակարգի թշուառ վիճակը և վերջապէս այդ ահագին ազմուկները զարթեցրին պարլամենտին իր լիտարգիւյցից, և ստիպեցին նրան վերջապէս հասկանալ, որ մօտեցել է ժամը, երբ այլ ևս անկարելի է արհամարհական կերպով վերաբերվել զէպի հողային հարցը:

Ասում են, որ պարլամենտի առաջին վիճարանութեան առարկայ կը լինի այս հարցը, և ամենքը մի առանձին զարմանքով են լսում այն, որ իբր նոյն իսկ պահպանողական կուսակցութիւնն է ընդունել այս հարցը իր հոփանաւորութեան ու պաշտպանութեան տակ: Հողային վերանորոգութիւններն իրանց հետ կը բերեն և մի ահագին կարգ ուրիշ անհրաժեշտ վերանորոգութիւնների, որոնցից ամենաառաջինը, կրկին կը լինի և անդրանիկ որդու արտօնութիւնների (մայօրատ) ոչնչանալը, որը վաղուց արդէն ծանրացել է ժողովրդի վիճակի վրա:

Ներկայումս անգանական հարցն այլ ևս առաջնայ պէս չէ զբաղեցնում հասարակական ուշադրութիւնը, և մի քանի լրագիրներ ասում են, որ կամ Անգլիան նոր զօրքեր պէտք է ուղարկէ այնտեղ, և կամ բոլորովին պէտք է ձեռք վերցնի Անգանիստանում գրտնված բրիտանական փոքրիկ բանակից, որի դէմ հազարաւոր ցեղեր են զինված, և եթէ զենեքալ Բօրեթալի ահաբեկ անուշը չը լի նէր այժմ, վաղուց արդէն կտրկել էր անգլիացիներին հոտը այնտեղից:

Ասում են, որ անգանական ցեղապետները աշխատում են 12,000 զօրք հանել անգլիական բանակի դէմ, և միանգամից ջարդել նրանց:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Սլավաստ 2 յունվ.

Սլավաստ գաւառի գրութիւնը այժմ ամենաուսարափելի վիճակի մէջ է հացի թանգութեան պատճառով: Երկու տարվայ միմեանց հակառակ եղանակները վիճակեցին ցանքերին. 57 թիւ շարունակ անձրեւները բոլորովին փտեցրին արդէն հասունացած հունձը իր տեղում, իսկ 58 թիւում այնպիսի սաստիկ երաշտութիւն եղաւ, որ բոլոր ցանքերը չորացան: Տեղացիք Աստուծոյ բարկութեանն են վերաբերում այս պատուհանը:

Յորենի մի բուռ (10 պուղ) Սլավաստում ան-

ցեալ տարիներում ծախվում էր 10 կամ 12 դանով, իսկ այժմ ծախվում է 65 կամ 70 դանով, կը նշանակէ որ առաջվայ արժէքից վեց անգամ աւելի թանգացել է, որ միանգամայն աղքատ ժողովրդի կարողութիւնից դուրս լինելով գնելը, չատերը սոված են միւսում: Երեսակայեցէք, կան ընտանիքներ, որ տարեկան 100 կամ 150 դան (30—40 րուբլի) վաստակ ունեն, որը երկու բեռ ցորենի գին է, այլ ևս որպէս կարող են մի ահագին ընտանիք կերակրել, որ մի ամսվայ մէջ երկու բեռ ցորեն կը սպառէ:

Ինչի և տեղացի աղքատներին հնար կար մի կերպով կերակրել մինչև առաջիկայ տարվայ հունձքը, որովհետև այստեղի ունեւորները բաւական խնամք ունեն չբաւորների վրա: Բայց հասարակութեան ցաւի վրա մի երկրորդ աւելի գոփարին ցաւ աւելացաւ: Սլավաստին սահմանակից Տաճկաստանի Աղբակ կոչված գաւառից այժմ գաղթել են այստեղ աւելի քան 300 հայ ընտանիք: Այդ ողորմելիները ռուս-թիւրքական վերջին պատերազմի տարիներում անդադար հալածվելով և անդադար կողովորվելով քրդերից, հանգստութիւն չունեցան ոչ վարելու և ոչ ցանելու համար. և ինչ էլ որ գնել էին, երաշտութիւնից չորացաւ: Այս պատճառով, վերջին չբաւորութեան հասած, և բոլորովին զրկվելով կերակրվելու կամ ապրելու միջոցներից, նրանք թողնում են իրանց հայրենիքը և գաղթում են Սլավաստ, մտածելով որ իրանց ազգակիցների մօտ ապրելու հնար կը գտնեն:

Բացի յիշեալ 300 ընտանիքը, Տաճկաստանի հայ գաղթականների թիւը Սլավաստում օր ըստ օրէ աւելանում է: Նրանք տարածվել են բոլոր հայոց գիւղերում և մուրացկանութիւն են անում: Շատ անգամ մի մուրացկան 10—20 տուն է մտնում, հազիւ նրան մի պատուաւ հաց են տալիս, որովհետև ամեն տեղ լսում է մի և նոյն պատասխանը. «Յո՛ր, մէկիդ տանք, մենք էլ հաց չունենք ուտելու, մեր երեխաներն էլ քաղցած են»...

Եթէ ձմեռ չը լինէր, այդ թշուառների ապրուստը աւելի զիւրին կը լինէր: Այս տարվայ սարսափելի ձմեռը աւելի դժուարացրեց նրանց ապրելը, օթեան պէտք է, հագուստ պէտք է, որ չունեն, քրդերը նրանց հագին մի կտոր չոր չին թողել: Այժմ լցվել են հայ գիւղացիների գոմերում և 5—10 ընտանիք բնակվում են միասին անասունների հետ: Տեղային հայերը շատ են ցանկանում այդ ողորմելիների կիւնքը պահպանելու, բայց անհնարին բան է մի այսպիսի ահագին բազմութիւն կերակրելը, երբ տեղացիներից շատերը իրանք էլ հաց չունեն ուտելու:

Այս կողմերում Տաճկաստանից գաղթել են, բացի հայերից, և շատ ասորի ընտանիքներ, որոնք բողբոջական, կաթօլիկ և նետոտական գաւառութիւններին են պատկանում: Բայց նրանց մասին հոգացողներ կան, նրանք եւրօպացի և ամերիկացի միսիօնարներ ունեն, որոնք ընկերութիւններ են կազմում, փող են հաւաքում և օգնում են իրանց սովեակներին: Բայց հայերի համար ոչ է հոգ տանում: Աղբակայ գաղթականների հետ եկած, ս. Խարգուղիմոս առաքելի վանքի վանահայր, և մի և նոյն ժամանակ Աղբակայ վիճակի յաջորդ Յովհաննէս վարդապետը դեռ անցեալ տարվայ նոյնմ բերի 10-ին մի նամակ գրեց Թաւրիզ Պարսկաստանի առաջնորդ Գրիգոր արքեպիսկոպոսին, խնդրելով, որ նորին սրբազնութիւնը օգնութեան ձեռք հասցնէ գաղթականներին և նրանց կենքքը մահից ազատելու համար կարգադրութիւններ անէ, —բայց նամակը մինչև այսօր մնացել է առանց պատասխանի...

Այժմ մեր միակ յոյսը մնացել է մեր հեռաւոր և մերձաւոր ազգայինների վրա, որ հոգ տանեն Աղբակայ գաղթականների մասին, գտնէ նրանք կարողանան այս ձմեռը անցկացնել, եթէ ոչ, այդ 300 ընտանիքից մինչև դաւու հունձքի ժամանակը գոցէ կէտն էլ չի մնայ, եթէ այսպէս կը շարունակվի նրանց կենքքը: Յոյս ունենք, որ մեր օտարերկրեայ հայերը, մասնաւոր Ռուսաստանի հայերը, այնքան կարեկցութիւն կը զգան զէպի իրանց թշուառ եղբայրակիցները, որ չեն թողնի նրանք սոված մէկ լինել:

Մարտիրոս Տէր-Մարտիրոսեանց

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Գաւրէմ, 21 յունվարի

Երկար միջոց լինելով Գավրիւթում, թող ներուի ինձ մի քանի խօսք իմ այդ երկարամեայ կեցութեանն ունեցած տպաւորութիւններից ասելու ընթերցողին: Այս միջոցներում Գավրիւթի հայերի այն ձգտումը զէպի ուսումն, և այն միաբանու-

թեան գործելը թէ արական և թէ իղական սեռի մէջ կրթութիւն տարածելու համար, (ինչպէս արդէն յայտնի է բաւական թղթակցութիւններից) կարերի է առաջին թաղը համարել, որ Գավրիւթի հայ հասարակութիւնը վերջապէս արթնանալով իր անտարբերութիւնից, մի կողմ թողնելով իր անմիաբանութիւնները, աշխատում է կրթել իր զաւակներին, մինչդեռ նա առաջ ասում էր թէ, վարդապետ կամ տէրտէր հօ չեն դառնալու: կամ թէ «աղջկանը ինչ հարկաւոր է կարդալը»—հէնց այս սառն խօսքերն էին հասարակութեան կողմից, որ յետագէմ թողելով Արամեան դպրոցը, իրական դպրոցի բացմանը գլխաւոր արգելաւորին էին:

Իրական դպրոցի անհրաժեշտութիւնը մի երեք տարի առաջ թէ ուսուցչական և թէ այլ ժողովներում բացատրեց նոյն տարվայ հայ լեզուի ուսուցիչ Յակոբ Միկիւք Յակոբեանցը, սակայն չը նայելով նաև արքայազն Անդրէաս առաջնորդի ցանկութեան այդ մասին, թէ տեղացից անհամաձայնութիւնը, և թէ մի քանի անձանց գործած խորամանկութիւնները թոյլ չը տուին դպրոցի հիմնվելուն: Բայց այժմ ի սրտէ ուրախ եմք, որ ոչ միայն մեր Գավրիւթի եղբայրները ունեն իրական սեռի դպրոց, այլ և թատրոնական մի խումբ:

Թէ Արամեան, և թէ Լիւսիայ թաղի ուսումնաբանները, լինելով հիմնված եկեղեցու բակում, կից են նաև հասարակաց գերեզմանատանը: Ուրիշ քաղաքներում գերեզմանատունները գտնվում են հեռու փոքր ինչ քաղաքից, իսկ Գավրիւթի այդ գերեզմանատունը լինելով առաջ քան ուսումնաբանների հաստատվելը, քաղաքին մօտ: մինչև այսօր էլ չը նայելով, որ հայերը ունեն առանձին քիչ հեռու քաղաքի միջին մասից մի մեծ հանգստարան, սակայն մեծ մասամբ տեղացիք իրենց ննջեցեալները թաղում են այդ գերեզմանատուններում, վախելով պարսից գործած բարբարոսութիւններից: Աներկբայ եմք որ այժման նոյն տեղի վիճակաւոր առաջնորդ Գ. Մուշեղեանցը կը կարգադրէ այդ բանը:

Աբել Գ. Ապրեսեանց

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզից հեռագրում են, յունվարի 30-ից, որ Դէրէզ վարդապետը, որը սկսել էր ճանապարհորդել Աֆրիկայի միջով արեւելքից զէպի արևմտեան փոքր, մուսու Ուշիմիում, Տանգանյիկ լճի փախի:

Աղբակաւորում սարսափելի թանգութիւն, սով և մահ է տիրում, մանաւանդ փախստականների մէջ: Նրանցից մէկ օրում մոլից մեռան 65 մարդիկ: Դիակները բերանում փայտի կտորներ զբոսան, որոնցով թշուառները կամենում էին յաղեցնել իրանց քաղցը: Սովը տարածվում է վանում և Բայազէթում: Ֆիլիպպոսյանում ապրում են 7000 փախստականներ: հիւպատոսները կարող են միայն նրանց երրորդ մասին հաղիւ օգնութիւն հասցնել:

Ասիական լրագիրները ներկայումս խօսում են չինաց բողբոխների ֆինանսական դժուարութիւնների մասին: Այս թագաւորը դեռ ևս պսակվելու համար իսկապէս շատ երիտասարդ է. բայց նրա պալատներում մինչև 70 կանայք են ապրում, որոնք մանաւանդ աչքի են ընկնում իրանց չորերի չեղելութեամբ: Միտալո, թաւիչ և այլ նիւթեր, նոյնպէս մարգարիտներ, որ կրում էին անցեալ տարի իրանց վրա վերոյիշեալ իշխանուհիք Շարեզակին լուսնի եղբորը նստեցան 250,000 տալէնթ, այսինքն հողային հարկի գումարը կէսից աւելի նստեցան, (տաէլ հաւասար է 2 ր. 50 Կ.) Մի քանի ամիս առաջ, կանանցից մէկին թագաւորը ընծայեց մէկ վերարկու զարդարված ամենաթանկագին և ամենահազուադիւտ մարգարիտներով ջաւն այն է, որ սա արդէն միջնադարի կին է և այս պատճառով, եթէ վերարկուն նրա մօտ կը լինի նրա մահվան օրը, այն ժամանակ, որպէս սովորութիւն է, պէտք է չորերը այրեն: Աղբակի պատահարից վախենալով բողբոխները մի քանի անգամ փորձ փորձեց վերադարձնել այդ չեղել վերարկուն, բայց իղուր, որովհետև պատառ իշխանուհին ձեռքից չէ թողնում:

Խմբագիր — հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ